**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,Արզնի,
5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 15 » սեպտեմբեր 2025 թվական №94**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ № 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել՝ համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 15-ի № 11 հերթական նիստի օրակարգը՝

1 ) Արզնի համայնքից «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող ընտանինքների երեխաների ուսման վարձը համայնքի կողմից մասնակի փոխհատուցման մասին:

2) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

3) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

4) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

5) Արզնի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 100-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ընդլայնման նպատակով՝ ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին:

7) Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը գնման նախապատվության իրավունքով օտարելու մասին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին ստորագրման օրվանից:

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 15 » սեպտեմբեր 2025 թվական №95**

## ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ «ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՆՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջների .

Համայնքի ավագանին **որոշում է՝**

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, Արզնի համայնքից ՝ « Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող անապահով ընտանքիների երեխաների ամենամսյա ուսման վարձը համայնքի կողմից մասնակի փոխհատուցել ՝ 4000 / չորս հազար/ ՀՀ դրամ գումարի չափով ՝ համաձայն հավելվածի :

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,Արզնի,
5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 15 » սեպտեմբեր 2025 թվական №96**

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի , 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի , համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ , 42-րդ կետերի և հիմք ընդունելով Արթուր Վանիկի Խոջոյանի դիմումը.

Համայնքի ավագանին **որոշում է** .

1. Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող , Արթուր Վանիկի Խոջոյանին սեփականության իրավունքով պատկանող 07-016-0220-0086 կադաստրային ծածկագրով , 2.131598 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /որից ՝ 0.952648 հա -ն վարելահող , 0.3061 հա-ն հնդավոր, 0.15 հա-ն կորիզավոր , 0.60155 հա-ն խաղող , 0.1213 հա-ն այլ / հողամասի նպատակային նշանակությունը փոխել և դարձնել արդյունաբերության ,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների , իսկ գործառնական նշանակությունը համարել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.Սահմանել , որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում

ստանալուց հետո:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,Արզնի,
5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 15 » սեպտեմբեր 2025 թվական №97**

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի , 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի , համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ , 42-րդ կետերի և հիմք ընդունելով Գնորգ Հրահատի Մանուկյանի դիմումը.

Համայնքի ավագանին որոշում է .

1. Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող , Գնորգ Հրահատի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 07-016-0446-0022 կադաստրային ծածկագրով , 0.14217 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը փոխել և դարձնել արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների , իսկ գործառնական նշանակությունը համարել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.Սահմանել , որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ
ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ
ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,Արզնի,
5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 15 » սեպտեմբեր 2025 թվական №98**

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն հողային օրեսնգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի , 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի , համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ , 42-րդ կետերի և հիմք ընդունելով Պավլիկ Սուրենի Մարգարյանի դիմումը․

Համայնքի ավագանին որոշում է ․

1. Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող , Պավլիկ Սուրենի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-016-0204-0038 կադաստրային ծածկագրով , 2․969 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի / որից ՝ 0․52 հա-ն այլ հողատեսք, 2․449 հա-ն վարելահող / նպատակային նշանակությունը փոխել և դարձնել արդյունաբերության ,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների , իսկ գործառնական նշանակությունը համարել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.Սահմանել , որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880 arzni_meria@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**« 15 » սեպտեմբեր 2025 թվականի N 99-Ա**

**ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 100-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթների.

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Արզնի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 30-ի « 2025 թվականի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 100-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ
ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ
ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ
ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Արզնի համայնք,ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 15 » սեպտեմբեր 2025 թվականի №100**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՝ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ , Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներին և հիմք ընդունելով Գևորգ Արմենի Արմենյանի դիմումը՝

Համայնքի ավագանին **որոշում է .**

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ուղղակի վաճառքի եղանակով՝ ընդլայնման նպատակով, օտարելու ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-016-0322-0109 կադաստրային ծածկագրով, 0.0141 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը / որից ՝ 0․00979 հա-ն վարելահող , 0․00431 այլ հողատեսք/ ընդլայնվող հողամասի սեփականատեր Գևորգ Արմենի Արմենյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-016-0322-0006 կադաստրային ծածկագրով, 0․09978 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ջրովի վարելահող հողամասին:

2.Պարտավորեցնել Գևորգ Արմենի Արմենյանին 650000 / վեց հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ վճարել Արզնի համայնքապետարանի 900105232178 հաշվեհամարին:

3.Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը 30-օրյա ժամկետում ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման :

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզնի,
Հեռ. (0222)94880 arzni_meria@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**« 15 » սեպտեմբեր 2025 թվականի N 101-Ա**

## ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ և 29-րդ կետերի և հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքում իրականացված հանրային լսման 2025 թվականի հունիսի 03-ի N 01 արձանագրությունը՝

Համայնքի ավագանին **որոշում է՝**

1. «ԱՐԶՆԻ ԱԿՎԱ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից ներկայացված՝ ՀՀ Կոտայքի մարզի Արզնի ախխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների իրականացման վերաբերյալ տրամադրել նախնական համաձայնություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ԶԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արզնի համայնք,
Արզնի, 5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6
Հեռ. (0222)94880, arzni.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**« 15 » սեպտեմբեր 2025 թվականի №102**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետի , « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներին և հիմք ընդունելով 27.10.2023 թվականին կնքված հողատարածքի վարձակալության պայմանագիրը / Գրանցամատյանում գրանցված 10436-ով/ և հողամասի վարձակալ Կոլյա Արկադիի Մոիսեևի դիմումը.

Համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել գնման նախապատվության իրավունքով օտարելու ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված 07-016-0435-0082 կադաստրային ծածկագրով, 0.56153 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության , այլ հողատեսքը հողամասի վարձակալ Կոլյա Արկադիի Մոիսեևին:
2.Պարտավորեցնել Կոլյա Արկադիի Մոիսեևին 12120000 / տասներկու միլիոն մեկ հարյուր քսան հազար / ՀՀ դրամ վճարել Արզնի համայնքապետարանի 900105232178 հաշվեհամարին , որի շուկայական արժեքը ձևավորվել է համաձայն « ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2025 թվականի թիվ « 630-Վ/025 » անշարժ գույքի գնահատման հաշվետվության հիման վրա:

3.Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ, պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կոլյա Արկադիի Մոխսենին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

ԱԼԵՔՍԱՆՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ

ԼԱԼԱՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

ԻՎԱՆՈՎԱ ՏՈՄԱ

ՅԱԿՈՒԲՈՎ ԱՐՏՅՈՄ

ՆԱԴՈՅԱՆ ՋԱԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ**